«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Գոյականական անդամի լրացումները Համո Սահյանի

երկերում

ԱՌԱՐԿԱ – Հայոց լեզու, գրականություն

ՀԵՂԻՆԱԿ – Անուշ Միքայելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Ճամբարակի թիվ մեկ հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Աշուն.....4

Որոշչի արտահայտությունը Սահյանի երկերում.....5

Հատկացուցիչ.....11

Բացահայտիչ.....13

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականություն.....16

Ներածություն

Այս աշխատանքը վերաբերում է գոյականական անդամիլրացումների գործածությանը Համո Սահյանի պոեզիայում: Այն կազմված է նախաբանից, որում ներկայացված է աշնան բնապատկերը՝ հագեցած որոշիչ և հատկացուցիչ լրացումներով: Դրան հաջորդում են գոյականի լրացումների համառոտ սահմանումները և արտահայտության ձևերը համապատասխան օրինակներով: Աշխատանքը կազմված է երեք գլուխներից, եզրակացությունից, բովանդակությունից և օգտագործված գրականության ցանկից: Երեք գլուխները գոյականի երեք լրացումներն են ներկայացնում, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված են համապատասխան օրինակներ մոտավորապես մեկից տասը: Սահյանի պոեզիայում բազմազան են որոշիչների օրինակները, ավելի քիչ են հանդիպում բացահայտիչ լրացման օրինակները: Այս աշխատանքը որոշակի խնդիրներ ու նպատակներ է հետապնդում:

Խնդիրներ՝

1. Երեխաներին սովորեցնել ինչպես օգտվել գեղարվեստական գրականությունից:

2. Ինչպես ընտրել թեմային համապատասխան օրինակներ:

3. Գրականությունից ընտրված օրինակներով ամրապնդել նոր դասը:

Նպատակներ՝

1. Համանման աշխատանքներով զարգացնել երեխայի ստեղծագործական միտքը:

2. Այսպիսի աշխատանքով նպաստել բառապաշարի հարստացմանը և գրագետ ներկայացնել բանավոր խոսքը:

3. Ապահովել գրականության հետ միջառարկայական կապը:

Ա Շ Ո Ւ Ն

Աշնան օրերն են հասել,

Իջել է ամպը սարին,

Եվ հրաժեշտ է ասել,

Կռունկը մեր աշխարհին:

Բարդին էլ չի սոսափում

Արագիլի թևի տակ,

Դեղին թերթեր է թափում

Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարույկ է կարծես

Ծեր տանձենին անտառի

Թվում է, թե մոտ վազես,

Ձեռք ու ոտքդ կվառի:

Քամին շատ էր թափառել,

Պարապ – սարապ թևը կախ,

Բայց արդեն գործ էր ճարել,

Տեսեք ինչքան է ուրախ:

20-րդ դարի երկրորդ կեսի հայ բանաստեղծության ամենապայծառ անհատականություններից է Համո Սահյանը, ով հարստացրեց հայ գրականությունը հայրենի բնության գույներով ու պատկերներով, ստեղծեց քարափների ու ջրվեժների, երկնքի ու ծիածանի մի գունեղ ու հետքրքիր աշխարհ: Գրողի ինքնագիտակցությունն ամենից առաջ պայմանավորված է նրա պատկերավոր մտածողությամբ:

«Այս իմաստով լեզվի մեջ որոշակի կարևոր նշանակություն են ձեռք բերում այն միջոցները, որոնց օգնությամբ հնարավոր է ներկայացնել պատկերվող կյանքի երևույթները»:

Վ. Պարտիզունի, Վ. Տերյան Երևան-2003, էջ 333

Իրենց ոճական արժեքով Համո Սահյանի չափածոյի պատկերավոր համակարգում առանձնահատուկ դեր ունեն գեղարվեստական որոշիչները (մակդիր-որոշիչ), որոնք իրենց բնութագրող դերով հանդերձ գրողի ոճը հատկանշող, նրա լեզվական արվեստը ցուցադրող տարրեր են, որոնց հմուտ ու նպատակային ընտրությունը բանաստեղծին օգնում է հասնելու նյութի գեղարվեստական ճշմարտացի արտացոլման:

Որոշչի արտահայտությունը Սահյանի երկերում

Որոշիչը գոյականի այն լրացումն է, որը ցույց է տալիս հատկանիշ, որակ, որպիսություն, չափ, քանակ: Որոշիչն արտահայտվում է՝

ա. որակական ածականով:

Որակական ածականները բազմազան են Սահյանի պոեզիայում: Սահյանի համար գույնը սոսկ առարկայի արտաքին բնորոշ հատկանիշ չէ, այն մտածողություն է, աշխարհընկալում: Սահյանի բնաշխարհի պատկերները միշտ ունեն մի թախծոտ

մշուշ, ամպի ու տխրության թափանցիկ մի քող, որ նստած է նրա քարափների, ձորերի ու անտառների վրա: Թախիծը Սահյանի պոեզիայում արտահայտվում է դեղինի միջոցով, որը որակական ածականի դրական աստիճանն է.

Ծառերից դեղին թախիծ է կաթում...

Որսում է թաթով թախիծը դեղին և

որսի հետ խաղում է կատուն...

(«Ինձ բացակա չդնեք» էջ 3)

Ծիածանի յոթ գույները՝ որպես որակական ածականներ իրենց վառ արտահայտությունն են գտել Սահյանի պոեզիայում:

Նորից կարմիր ու կանաչ

Իմ երազները ...

Մայրս խմոր է արել

Սպիտակ խեժ է ...

(«Տոհմի կանչը» էջ 34)

Իջավ սարյակը դաշտում

Շուրթի վրա մի կանաչ տող էր կտուցին:

(«Տոհմի կանչը» էջ 38)

Սահյանի բանաստեղծական շարքերում հայրենի բնաշխարհի հայ ժողովրդի ճակատագրի և մարդու հոգեվիճակի հետ կապված հաճախ են թափանցում սև ու գորշ գույներ՝

Չարացած ընդերքն այս մոլորակի

Կցնցվեր ցավից մի սև երկունքի:

(«Ինձ բացակա չդնեք » էջ 25)

Սպիտակը Սահյանի պոեզիայում խորհրդանշում է կարոտը, մանուշակագույնը հայրենի եզերքի սիրո և կարոտի նրբերանգն է արտահայտում:

«Մթնշաղն իջավ դաշտերի վրա

մանուշակագույն ստվերների հետ»

Կանաչը կյանքի հավերժության, հայրենի բնաշխարհի ու հողի խորհրդանիշն է՝

Քեզ նման կանաչ կյանքով քեզ համար ելած մարտի:

բ. հարաբերական ածականներով:

Սահյանի պոեզիայում բազմազան են հարաբերական ածականներով արտահայտված գունային ինքնատիպ մակդիր որոշիչները՝ արծաթյա, զմրուխտե, սաթե, փիրուզյա, ոսկյա և այլն:

Նազում ես ու շորորում զմրուխտե քո շորերում

Իմ հեռու, հեռու նաիրյան դալար բարդի:

(«Տոհմի կանչը» էջ 53)

Դիմացել է պիրկ պարանի նման

Արմատով կառչած քարե երկնքին:

(«Տոհմի կանչը» էջ 73)

Հատկանշական է «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը, որը սկզբից մինչև վերջ հագեցած է հարաբերական ածականներով:

Սահյանի տաղանդը հատկապես մեծ է գունանուն մակդիրը գոյական որոշիչով արտահայտելու վարպետության մեջ: Հարկ է նշել, որ ամեն գոյական խոսքային միջավայրում չի կարող մակդիր դառնալ. ահա այստեղ է դրսևորվում Սահյանի տաղանդը գունանուններին փոխարինող բառերի ընտրության մեջ, այն բառերի, որոնք, կորցնելով իրենց գոյականական բովանդակությունը, ստանում են իրենց իսկական իմաստին բնորոշ հատկանիշի երանգներ: Այսպիսով՝ Սահյանի պոեզիայում հանդիպում ենք գոյականով արտահայտված բազմաթիվ որոշիչների:

Աչքս՝ քեզ, հույսս բախտի վրա,

Բախտի ճամփան էլ քար ու քռա էր:

Հաստատեցիր ըստ քո ծառայության պարտքի,

Որ մնացած բոլոր սենյակներում այդ տան

Ոչ մի լավ բան չկա:

(«Տոհմի կանչը» էջ 355)

Այս օրինակներում ընդգծվածները գոյականի սեռական հոլովով դրված որոշիչներ են:

Այնտեղ՝ իմ հեռու Գյազբելի լանջին,

Շուշան ամպերի քնքուշ թևի տակ:

(«Տոհմի կանչը» էջ 17)

Մի շնորհքի նշխար, մի բուռ ամոթ

Ախորժակ ես տվել աշխարհի չափ:

(«Տոհմի կանչը» էջ 266)

Մի բուռ աշխարհե,

Մի աշխարհ խիղճ է:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 25)

Բերված օրինակներում ընդգծվածներըգոյականի ուղղական հոլովով արտահայտված որոշիչներ են:

գ. առարկայի հատկանիշային իմաստ արտահայտող դերանուններով:

Ինձ այս կածանի մտերմությունը,

Ինձ հողի հանդեպ այս ջերմությունը:

Հոգնել եմ ամեն հովից թեքվելուց:

(«Տոհմի կանչը» էջ 170)

Ականջի մեկը կախվել է մի քիչ,

Իսկ մեկով ինչ-որը ձայներ է որսում:

Հաստատեցիր ըստ քո ծառայության պարտքի,

Որ մնացած բոլոր սենյակներում այդ տան

Ոչ մի լավ բան չկա:

Քանի աշխարհ է կորել աշխարհում,

Բայց աշխարհն էլի ելքեր է ճարում:

Ինչքան սերեր ունեցա, ինչքան տերեր ունեցա

Ես այս անտեր աշխարհում:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 132)

Սահյանի բանաստեղծություններում շատ են բացարձակ և դասական թվականներով արտահայտված որոշիչները:

Չորս ամառ եկավ գնաց,

Չորս անգամ արտը ծլեց,

Յոթ նամակ եկավ դարբնին,

Յոթ տեղից մեջքը ծռեց:

Բարակեց ծուխը գյուղի

Հազար ցավ, հույսը մի հատ:

(«Տոհմի կանչը» էջ 233)

Այս օրինակներում որոշիչներն արտահայտվել են ընդգծված բացարձակ թվականներով: Բանաստեղծություններում շատ են դասական թվականով արտահայտված որոշիչները:

Առաջին սերս ձնծաղիկի պես,

Ձնհալի միջից մի անգամ ժպտաց:

(«Տոհմի կանչը» էջ 303)

Մի լույս կմարի հինգերորդ հարկում

Կմթնեն մի պահ աչքերը քո ջինջ:

(«Տոհմի կանչը» էջ 325)

Ընդգծված որոշիչները արտահայտված են դասական թվականով:

դ. հարակատար դերբայով արտահայտված որոշիչ:

Երգի մեջ հասկի հովին

Թուխս նստած թխլիկ լորեր:

(«Տոհմի կանչը» էջ 361)

Հնձած խոտի բույր է բերում

Սարից փախած քաին:

(«Տոհմի կանչը» էջ 170)

ե. ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ:

Գյուղ տանող ճամփով

Գնում է հայրս՝ ցախը շալակին:

Կարկատանները պոկում է քամին,

Խառնում ծառերից

Թափվող խաշամին:

(«Ինչու հիշեցրի» էջ 42)

զ. անորոշ դերբայով արտահայտված որոշիչ:

Բանաստեղծություն գրելու պահին

Ամբողջ աշխարհը իմ տեղ ու տունն է:

Հաշտվել էի քո մեղքի հետ

Բայց ուժ չկար քեզ ներելու:

(«Տոհմի կանչը» էջ 304)

Է. որոշիչն արտահայտվում է ազատ և կայուն դարձվածքներով, որոնցով հարուստ է Սահյանի պոեզիան:

Հետո տեսա բակի, մեր շինական բակի

Անտաշ քարով շարած պարսպի տակ:

(«Տոհմի կանչը» էջ 291)

Ախ, լոթ գույնի մամուռ հագած

Մեր երկանքի քարի տակ:

(«Տոհմի կանչը» էջ 259)

ը. որոշչի արտահայտությունը կապային կառույցով:

Գեղեցկուհու նման դու քմահաճ իմ երգ,

Գեղեցկուհու նման դու մանրախնդիր:

(«Տոհմի կանչը» էջ 338)

Ոչ ծիծաղն է մի ծիծաղ

Ոչ էլ ցավն է ցավի պես:

(«Տոհմի կանչը» էջ 289)

Հատկացուցիչ

Գոյական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս պատկանելություն, սերում, ծագում, վերաբերություն կոչվում է հատկացուցիչ: Պատըասխանում է ում, ինչի հարցերին և դրվում է սեռական հոլովով: Հատկացուցիչն արտահայտվում է՝

ա. գոյականով

Աչքդ աղջկա աչքին է առել, և բոց են կտրել այտերն աղջկա**:**

(«Տոհմի կանչը» էջ 164)

Տեսնես ինչ եղան լորերը Լորի,

Եվ լորինների լացով լվացված

Մանկությունս, որ նման էր լորի:

(«Տոհմի կանչը» էջ 162)

Օրինակներում ընդգծվածները գոյականով արտահայտված հատկացուցիչներ են:

բ. դերանունների տարբեր տեսակներով՝ անձնական դերանունով արտահայտված հատկացուցիչ:

Ու ոտից գլուխ մաշկը նրա

Ծաղկած եղինջով կչափեինք:

(«Տոհմի կանչը» էջ 153)

Մեր լեզուն մեր խիղճն է դա,

Սուրբ հացը մեր սեղանի:

(«Տոհմի կանչը» էջ 97)

գ. փոխադարձ դերանունով արտահայտված հատկացուցիչ:

Ու թռնում էինք իրար շալակ,

Իրար շպրտում փշերի մեջ:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 152)

Մեկմեկու շալակ են բարձրանում,

Բռնում են մեկմեկու բաշից:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 35)

դ. հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված հատկացուցիչներ:

Ում զրույցը լսեմ մինչև լուսաբաց...

(«Տոհմի կանչը» էջ 260)

Սիրողներ կան, որոնց ձեռքի

Ու քայլերի քամուց անգամ...

(«Տոհմի կանչը» էջ 183)

ե. անորոշ և որոշյալ դերանուններով հանդես եկող հատկացուցիչներ:

Թե մեկի ոտքը ճամփին

Պատահմամբ փուշ էր մտնում,

Աշխարհը շուռ էր գալիս,

Բոլորիս գլխին մթնում:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 210)

զ. հատկացուցիչը արտահայտվում է նաև գոյականաբար գործածված ածականով:

Դու՝ նորերի աղոթք ու խիղճ,

Ես՝ անցյալի քարեղեն ճիչ:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 301)

Եվ դողում է քո շուրթերին

Թաքուն մի ահ մեղավորի:

(«Կանաչ-կարմիր աշուն» էջ 302)

Է. գոյականաբար գործածված հարակատար դերբայով:

Ներումն աղերսեց մեղավորն ու գութ

Եվ նեղն ընկածի լացով ինձ ներեց:

Բացահայտիչ

Գոյականով արտահայտված անդամի ով կամ ինչ լինելը ցույց տվող լրացումը, կոչվում է բացահայտիչ: Բացահայտիչը լինում է երեք տեսակ՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական: Բուն բացահայտիչը բացահայտում է լրացյալի ով կամ ինչ լինելը և պահանջում է նույն հարցը:

Նա՝ Ռոբերտ պատանին՝ բանաստեղծ խորունկ՝

Անհաս քնարերգուն իր աշխարհի, որ անձրև էր սիրում

Ծիածան ու մանուկ, գութանն առավ,

Գնաց դաշտը վարի:

(«Հայաստանը երգերի մեջ» էջ 351)

Եվ ես՝ քո ավագ, ապերախտ որդին,

Իմ այս երգով այս մեծ աշխարհում իմ ամենամեծ կորուստն եմ լալիս:

(«Տոհմի կանչը» էջ 377)

Մասնական բացահայտիչը ամբողջովին չի կրկնում բացահայտյալին, այլ բացահայտում է նրա միայն մի կողմը և ձևավորվում է որպես, իբրև կապերով:

Մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է բացահայտյալին և որոշիչ հոդ չի ստանում:

Ոլոր կածանը՝ որպես պարան, ժայռի պռունկից իջնում էր գետ:

(«Տոհմի կանչը» էջ 337)

Արագածն եմ սիրուն քո սեգ՝

Իբրև շռայլ բախտի նվեր:

(«Հայաստանը երգերի մեջ» էջ 59)

Մասնավորող պարագայական բացահայտիչը կոնկերտացնում է տեղ, ժամանակ ցույց տվող բացահայտյալին՝ պարագաներին:

Կապուտջուղի մարմանդներում՝

Իր ժայռեղեն խանձարուրում,

Երեխայի թաթերի պես

Դուրս է պրծել

Ժախը նորեն:

(«Հայաստանը երգերի մեջ» էջ 322)

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշխատանքը հարուստ է բազմազան օրինակներով: Այն շատ կարևոր է երեխայի կենսամակարդակի բարձրացման համար, նպաստում է նյութի ամրապնդմանը, զարգացնում է երեխայի տեսողական հիշողությունը, հարստացնում է երեխայի բառապաշարը՝ արթնացնելով սեր գրականության և արվեստի նկատմամբ: Այսպիսի աշխատանքները հնարավորություն են ընձեռում երեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացման համար: Երեխան հարկադրված կարդում է գրականությունը և անգիր է սովորում տվյալ հատվածը դասը գրագետ և հետաքրքիր ներկայացնելու համար: Աշխատանքը միջառարկայական կապ է հաստատում գրականության, ոճաբանության և գեղագիտության հետ: Երեխաները առնչվում են գեղարվեստական գրականության արտահայտչամիջոցներին՝ մակդիրներին, փոխաբերություններն և համեմատություններին: Այսպիսի աշխատանքով երեխաները գաղափար են կազմում գեղեցիկի և բարու մասին ծանթանում հայրենի բնաշխարհի բնապատկերների գեղեցիկ ու նուրբ նկարագրություններին:

Օգտագործված գրականություն

1. «Հայագիտական հանդես»,
2. Ա. Հովակիմյան «Պոետիկայի հարցեր»,
3. Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան «Հայոց լեզու»,
4. Հ. Սահյան «Տոհմի կանչը», «Կանաչ-կարմիր աշուն», «Հայաստանը երգերի մեջ»: